ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2012 թ.

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը լսելով և քննարկելով ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ.Մ.Մարտիրոսյանի՝ ՀՀ ԳԱԱ 2011թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցումը, արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ նախագահությունում, բաժանմունքներում և գիտական կազմակերպություններում իրականացվող գործունեությունը նպատակաուղղվել է ինչպես նոր գիտական արդյունքների ստացմանը, այնպես էլ հանրապետությունում ՀՀ ԳԱԱ դերի և տեղի ամրապնդմանը:

2011թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից “ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին” ՀՀ օրենքն ընդունելուց հետո հստակեցվեց ԳԱԱ կարգավիճակը: Որպես պետական լիազորված մարմին՝ ԳԱԱ իրավունք ընձեռվեց համակարգելու գիտական կազմակերպությունների գործունեությունը: Մշակվեց և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվեց ակադեմիայի նոր կանոնադրությունը, որն ապահովում է ակադեմիական կյանքի դեմոկրատացում, ակադեմիայի վարչական մասի կազմավորման գործընթացին ինստիտուտների ներկայացուցիչների մասնակցություն, ինստիտուտներին հնարավորություն է տրվում զբաղվել ձեռնարկատիրական լայնածավալ գործունեությամբ, գիտական արդյունքների առևտրայնացմամբ:

Ըստ օրենքի և նոր կանոնադրության պահանջների՝ մշակվել են համապատասխան ենթաօրենսդրական ակտեր: Ակադեմիայի պատմության մեջ առաջին անգամ ձևավորվել է էթիկայի հանձնաժողով: Ստեղծվել է տնօրենների խորհուրդ:

Հաստատվել է ՀՀ ԳԱԱ 2011-2015թթ. հիմնարար գիտական հետազոտությունների ծրագիրը: ՀՀ ԳԱԱ 28 ինստիտուտներում և 3 գիտական կենտրոններում շարունակվել են հիմնարար և կիրառական բնույթի գիտական

մշակումները բազային, թեմատիկ և նպատակային ֆինանսավորմամբ, միջազգային ծրագրերով և պայմանագրերով:

2011թ. գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հիմնարար հետազոտությունների գիտական բարձր մակարդակը: ՀՀ ԳԱԱ բաժանմունքների տարեկան ժողովներում ներկայացվել են հիմնարար գիտությունների բնագավառում ստացված արժեքավոր արդյունքները: Ակադեմիայի անդամների, արտասահմանյան անդամների և առաջատար գիտնականների կողմից ներկայացվել են 40 գիտական զեկուցումներ և հաղորդումներ:

Գիտության և կրթության ինտեգրման մասին են վկայում ՀՀ ԳԱԱ-ում իրականացվող մագիստրոսական ուսուցումը և ուսուցման պայմանների բարելավումը, ՀՀ բուհերի հետ համատեղ ամբիոնների ստեղծումը:

Որոշակի առաջընթաց է դիտվում ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական գործունեության բնագավառում:

Ժողովն արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ, որպես ՀՀ կառավարության գիտական հարցերով խորհրդական, անդրադարձել է բոլոր այն նախագծերին և օրենսդրական նախաձեռնություններին, որոնք Ակադեմիա են ուղարկվել քննարկելու և կարծիք հայտնելու համար: ՀՀ կառավարությանն են ներկայացվել դիտարժան առաջարկություններ և դիտողություններ:

Նշելով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ համակարգում տեղ գտած դրական տեղաշարժերը և նշանակալից ձեռքբերումները՝ ընդհանուր ժողովը միաժամանակ ընդգծում է ՀՀ ԳԱԱ աշխատանքներում առկա որոշ բացթողումներն ու թերությունները և այն կարևորագույն խնդիրները, որոնց լուծումից է կախված համակարգի հետագա գործունեության արդյունավետությունը:

Ֆինանսական միջոցների սղության պատճառով դեռևս չի հաջողվել իրականացնել համակարգի կազմակերպությունների շենքերի և շինությունների վերանորոգման աշխատանքները:

Վատթար վիճակում է շարունակում մնալ ինստիտուտների գիտատեխնիկական բազան: Գիտական կազմակերպությունները հնարավորություն չեն ունեցել ձեռք բերել ժամանակակից գիտատեխնոլոգիական սարքավորումներ:

Կա դրական տեղաշարժ կարևորագույն մի խնդրում՝ ինստիտուտների գիտական անձնակազմի երիտասարդացման հարցում: Այսօր Ակադեմիայի

գիտաշխատողների 29տոկոսը մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականներ են: Միևնույն ժամանակ ժողովն արձանագրում է, որ գիտաշխատողների աշխատավարձը ծայրահեղ ցածր է, որը երիտասարդ կադրերի արտահոսքի հիմնական պատճառն է: Այս հարցում դրական դեր կարող է ունենալ գիտական կոչումների համար գիտնականների կենսաթոշակին հավելավճարի ավելացումը. դա կխթանի կենսաթոշակային տարիքի գիտնականների՝ երիտասարդ մասնագետներով մասամբ փոխարինմանը:

Հայաստանի Հանրապետությունում այսօր հետևողական ինովացիոն քաղաքականություն չի իրականացվում: Հասունացել է հանրապետական ինովացիոն կենտրոն ստեղծելու հարցը: Կենտրոնը չպետք է ունենա գերատեսչական պատկանելություն, որպեսզի կարողանա լրջությամբ ու խորությամբ զբաղվել ինովացիոն գործունեությամբ՝ հաղթահարելով տնտեսվարող սուբյեկտների մեծ մասի բացահայտ անտարբերությունը նորարարական առաջարկների նկատմամբ:

Ծառացած խնդիրների լուծմանը կնպաստի օպտիմալացման ծրագրի շնորհիվ ազատված տարածքների իրացումից գոյացած միջոցների ներդրումը զարգացման ծրագրերում, որոնց համար ՀՀ ԳԱԱ ստացել է Հայաստանի Հանրապետության նախագահի համաձայնությունը: Սոցիալական դժվար լուծելի խնդիրներից է բնակարանային պրոբլեմը, որն առավել խոցելի է հատկապես երիտասարդների համար: Հանրապետության նախագահի աջակցությամբ երիտասարդ գիտաշխատողների համար 200 բնակարան ունեցող բնակելի շենք է կառուցվում Օրգանական և դեղագործական քիմիայի կենտրոնի տարածքում: Նախագահի մեկ այլ աջակցությամբ 50-60 բնակարան ունեցող բնակելի հաջորդ շենքը կսկսվի կառուցվել այս տարի՝ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի աշխատակիցների համար:

Ելնելով վերը շարադրվածից՝ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը որոշում է հավանություն տալ ՀՀ ԳԱԱ գործունեությանը: Միևնույն ժամանակ տարեկան ընդհանուր ժողովը, ՀՀ ԳԱԱ գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, որոշում է առաջիկայում իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Հանձնարարել ՀՀ ԳԱԱ բաժանմունքներին առավել աջակցել ակադեմիական գիտական կազմակերպությունների միջազգային համագործակցությանը՝

օգտագործելով նաև ԳԱԱ արտասահմանյան անդամների, հատկապես սփյուռքահայ արտասահմանյան անդամների հնարավորությունները:

- Մշակել երիտասարդ գիտնականների հետ տարվող ՀՀ ԳԱԱ գործունեության համալիր ծրագիր, մասնավորապես պայմաններ ստեղծել ասպիրանտական կրթությունը հաջողությամբ ավարտած երիտասարդ մասնագետներին գիտական կազմակերպությունների աշխատանքներում ներգրավելու համար, երիտասարդ գիտնականների կազմից ստեղծել գիտական կազմակերպությունների ղեկավար պաշտոններում փոխարինողների (ռեզերվի) ցուցակներ և այդ երիտասարդների հետ տանել հատուկ աշխատանք:
- Հանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահությանը միջոցներ հայթհայթել ինստիտուտների ինֆրակառուցվածքները ժամանակակից գիտատեխնիկական միջոցներով համալրելու համար, ինչն էապես կավելացնի արտաբյուջետային՝ դրամաշնորհային և պայմանագրային, աշխատանքների ծավալները:
- Հանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահությանը միջոցներ ձեռնարկել ԳԱԱ համակարգում ինովացիոն աշխատանքների խթանման ուղղությամբ:
- Հանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահին՝ դիմել ՀՀ կառավարություն հետևյալ հարցերով.

  1. բարձրացնել գիտաշխատողների աշխատավարձը,
  2. ՀՀ ԳԱԱ համակարգը ներգրավել սոցիալական փաթեթում,
  3. կատարելագործել հարկային դաշտը գիտատեխնիկական բնագավառում,
  4. վերանայել գիտաշխատողների արձակուրդի ժամանակաչափը,
  5. գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներն ավելացնել կենսաթոշակին:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ